ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 հուլիսի 2024 թվականի N 1083-Ա

ԳՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-23/04 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑ «ԿԻՄԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ» Ա/Ձ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, նկատի ունենալով, որ «Կիմա Խաչատրյան» Ա/Ձ-ն մասնակցել է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի կարիքների համար գույքի ձեռքբերման նպատակով «ԳՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-23/04» ծածկագրով գնման ընթացակարգին և Մարտունու համայնքապետարանի կարիքների համար պետք է մատակարեր (բայց ոչ ուշ մինչև 01.06.2024 թվականը) դաշնամուր 7 հատ, ամբիոն 8 հատ, խոսափողի հենակ 9 հատ, խոսափող 10 հատ, կենցաղային երկկողմանի աստիճան 8 հատ, հայելի 8 հատ, շերտավարագույր 342 քմ, նարդի 40 հատ, շախմատ 30 հատ, սեղանի թենիս 4 հատ, թանգարանային դարակաշար 4 հատ, ցուցասեղան ապակիով 2 հատ, թանգարանային պատվանդան 4 հատ, ցուցասեղան 2 հատ, դարակաշար 1 հատ, սակայն «Կիմա Խաչատրյան» Ա/Ձ-ի կողմից օրենքով սահմանված ժամկետում վերոնշյալ ապրանքները չեն մատակարարվել, հիմք ընդունելով պայմանագրի 2.1.1 կետը (ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի) և 2.1.7 կետը (միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը)՝ Մարտունու համայնքապետարանը 2024 թվականի հունիսի 24-ին միակողմանի լրիվ լուծել է պայմանագիրը: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է

պատվիրատուի կողմից պայմանագրի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները՝ ***որոշում եմ.***

1. ԳՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-23/04 ծածկագրով գնման գործընթացի մասնակից «Կիմա Խաչատրյան» Ա/Ձ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ստորև համապատասխան տեղեկատվությունը աղյուսակի տեսքով:

Մասնակցի				
Անվանում	ՀՎՀՀ	Գործունեության հասցե	Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքերը	Գնամն ընթացակարգի ծածկագիրը
«Կիմա Խաչատրյան» Ա/Ձ	43255361	ՀՀ Կոտայքի մարզ, Զովունի 38 փողոց, շենք 22/5	<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 1-ին մասի , 6-րդ կետի ա/ ենթակետ **Խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը**	ԳՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-23/04

2. Սույն որոշման մեկական օրինակն ուղարկել «Կիմա Խաչատրյան» Ա/Ձ- ին և ՀՀ Ֆինանսների նախարարություն:

3. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը դնել Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Թաթուլ Դավթյանի վրա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2024թ. հուլիսի 03
ք. Մարտունի